ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի մարտի 11-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-26/04»

Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Օդերևութաբանական ռադիոլոկացիոն կայանի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026 թվականի մարտի 10-ին ժամը 13:10:25-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2026 թվականի մարտի 11-ին ժամը 11:30-ին տրամադրված պարզաբանումը՝

Question No. 1: Could you please confirm the requirements for the bank guarantees and whether they may be submitted in paper or electronic form? Would a guarantee issued by Komerční banka, headquartered in the Czech Republic and a member of the Société Générale Group, be acceptable?

Հարցադրում N 1: Կարո՞ղ եք խնդրեմ հաստատել բանկային երաշխիքների պահանջները և արդյոք դրանք կարող են ներկայացվել թղթային կամ էլեկտրոնային տարբերակով: Արդյո՞ք ընդունելի կլինի Չեխիայի Հանրապետությունում գտնվող «Կոմերչնի բանկի» կողմից տրված երաշխիքը, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Չեխիայի Հանրապետությունում և «Սոսիետե Ջեներալ» խմբի անդամ է:

Clarification N 1

1. In section 10.3 of Invitation, Part 1, Section 10, it is clearly stated, «10. 3 If the procurement procedure is organized pursuant to Article 15, part 6 of the Law and, at the time the authority to conclude the contract arises, no funds are budgeted, then the contract security is provided in the form of a unilaterally approved declaration - a penalty or cash deposit - Annex No. 4.1:

At this stage, the winner shall submit a unilaterally confirmed declaration in the form of a penalty or cash, Annex No. 4.1, amounting to 10 percent of the proposed price

Section 8.16 of the draft contract in Annex 5 of the Invitation provides that the supply of the goods under the Contract shall be carried out upon the availability of the necessary financial resources for that purpose and upon the conclusion of a corresponding agreement between the parties. If the amount of financial resources allocated for the performance of the contract exceeds twenty-five times the base procurement unit, then an agreement shall be concluded by the Buyer if the contract security provided by the Seller in the form of a penalty is replaced with a guarantee or cash, in accordance with Annex No. 4.

The contract security deposit amounts to 10 percent of the purchase price. Since the procedure is organized under Article 15, part 6 of the Law, the contract security deposit is calculated on the **base of contract price.**

2. The contract security provided by the bank you propose in the form of a bank guarantee will be acceptable if that bank is cooperating with any of the banks operating in the Republic of Armenia.

The contract security in the form of a bank guarantee must be submitted in the original. A copy of the guarantee, reproduced from the original, is sent by the guarantor from his/her official email address on the date the guarantee is provided, to the address specified in the invitation to the procurement procedure organized for the purpose of concluding the contract - to the email address of the secretary of the evaluation committee: gnumner@env.am.

Պարզաբանում N 1: 1. Հրավերի 1-ին մասի 10-րդ բաժնի 10.3 կետում հստակ նշված է «10.3 Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով՝ Հավելված №4.1: **Տվյալ փուլում հաղթող մասնակիցը ներկայացնելու է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով՝ Հավելված №4.1՝ առաջարկած գնի 10 տոկոսի չափով:**

Հրավերի Հավելված 5-ի պայմանագրի նախագծի 8.16-րդ կետով սահմանված է՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ Հավելված №4-ով:

Պայմանագրի ապահովման չափը կազմում է գնման գնի 10 տոկոսը: Քանի որ ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա պայմանագրի ապահովման չափը հաշվարկվում է **պայմանագրի գնի նկատմամբ:**

2. Ձեր կողմից առաջարկված բանկի կողմից ներկայացված՝ բանկային երաշխիքի ձևով պայմանագրի ապահովումը ընդունելի կլինեի, եթե տվյալ բանկը համագործակցում է Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերից որևէ մեկի հետ:

Բանկային երաշխիքի ձևով պայմանագրի ապահովումը պետք է ներկայացվի բնօրինակ տարբերակով, իսկ երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ gnumner@env.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-26/04» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին:**

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկոտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով